

Հայ ազգը այսօր կանգնած է իր համար քախտորոշ իրադարձու-
թյունների շեմին և ապագա, մեծ դեպքերի ժամանակ հաղթական ար-
դյունքների հասնելու համար անհրաժեշտ է ծիշտ կողմնորոշվել ան-
գամ այն հարցերում, որոնց իրականացումը այսօր կարող է թվալ ան-
հավանական: Պետք չէ թուլլ տալ, որ կրկնվի 1918 թվականի խառնա-
շփոթությունը, երբ ռուսական հեղափոխության հետևանքով Արևելյան
Հայաստանի անկախացումը անակնկալի բերեց բոլոր ազգային գործիչ-
ներին ու կուսակցություններին, որոնք ոչ մի ծրագիր չու-
նեին դեպքերի այդպիսի շրջադարձի համար:

Աշխարհը կանգնած է մեծ իրադարձությունների շեմին: Արդեն
յոթանասուն տարի միջազգային ասպարեզում մանևրող Խորհրդային
Միությունը ստիպված կլինի կատարել քայլեր, որոնք քախտորոշ կլի-
նեն թե իր, թե աշխարհի համար:

Առաջին համաշխարհային պատերազմում ջախջախված Ռուսաստանը,
խուսափելով միջազգային ասպարեզում երրորդ կարգի պետություն դառ-
նալուց և որպես կայսրություն գոյությունը դադարեցնելու վտանգից՝
հազավ սոցիալիզմի գրահը և արևմտյան գաղութատիրական հզոր տերու-
թյուններին հակադրեց սեփական, սոցիալիստական, գաղութատիրական հա-
մակարգը:

Ստացվեց ներքին հակասական վիճակ, որովհետև բուն Ռուսաստանը
քաղաքականապես իշխող դեր ունեւր ծայրամասերի վրա, բայց զիջում էր
ներանցից շատերին թե տնտեսապես, թե կուլտուրապես: Այն շրջանները,
որոնք ավելի հետամնաց էին քան բուն Ռուսաստանը, Ռուսաստանի կենտ-
րոնածիգ հակումներին հակադրում էին իսլամի պես ուժեղ ու հարձա-
կողական գաղափարախոսություն: Մինչ Ռուսաստանը զբաղված էր միաս-
նական, տնտեսական, կենտրոնածիգ համակարգ ստեղծելով, և այդպիսով
արգելակելով Ռուսաստանի ծայրամասերի սոցիալ-կուլտուրական շնակա-
նոն զարգացմանը, մինչ Ռուսաստանը ներքին հակասություններից դժրդ-
ված իր համար մշակեց արտաքին քաղաքականության հարձակողական տակ-
տիկա, որը նշանակում էր հսկայածավալ ռազմական ծախսեր, տնտեսու-
թյան միլիտարիզացիա և դրա հետևանքով բնակչության էլ ավելի իրա-
վազրկում, արևմուտքը ապրելով ժողովրդավարության աստիճանական զար-
գացում՝ տապալեց սոցիալիզմի Գերմանո-իտալական տարբերակները և
աստիճանաբար սկսեց ազատվել գաղութներից: Գաղութային համակարգը
իրեն սպառել է և քաղաքականապես, և տնտեսապես:

Գաղութատիրութիւնն նշանակում է հսկայածավալ ռազմական ծախսեր, աշխատանքի ցածր արտադրողականութիւնն գաղութներում, ավելորդ ծախսեր հումքի տեղափոխման ժամանակ և ողջ երկրի արդյունաբերութեան ու գյուղատնտեսութեան աճի արգելակում:

Դրանից բացի, կապի, լրատվութեան հոսքի, փոխադրամիջոցների աշխատանքի պասսիվացումը, տարբեր ժողովուրդների պասսիվ շփումը և մշակույթի փոխանակումը արագացրին ժողովուրդների ինքնագիտակցութեան զարգացման ընթացքը ու նույնիսկ ամենահետամնաց ցեղային միութիւնները, կարճ ժամանակամիջոցում կազմավորվելով որպես ժողովուրդներ, հետագա, բարենպաստ, ազգային, կուլտուր-սոցիալական զարգացման համար, կանգնեցին անկախ պետականութիւնն ստեղծելու անհրաժեշտութեան առաջ:

Խորհրդային Միութեան գաղութատիրական համակարգը սերտաժամ է սոցիալիզմի միահեծան գաղափարախոսութեան հետ և ամրացված է սահմանադրական օրենքներով: Հենց դա էլ արգելակում է Խորհրդային Միութեան տնտեսութեան բնականոն զարգացումը և պատճառ է դարձել Խորհրդային Միութեան անդառնալիորեն հետ մնալուն միջազգային ասպարեզում: Մյուս կողմից, սոցիալիստական-գաղութատիրական-կայսերական, հետադիմական սոցիալ-քաղաքական վարչածեղ, երկրի միակ կուսակցութեան միանձնյա ղեկավարին ու կուսակցական արխատկրատիային տալիս է անսահմանափակ իրավունքներ պետութեան միջոցների ու քաղաքացիների անձի նկատմամբ: Իրավունքներ ու արտոնութիւններ, որոնց կնախանձեին ցանկացած միապետութեան միապետ և արխատկրատական վերնախավ: Ողջ իշխանութիւնը, պետութեան բոլոր միջոցները, ուժերը կենտրոնացված են նրանց ձեռքում և, բնական է, որ նրանք ոչ մի կերպ չեն ուզում զիջել իրենց ղիրքերը: Փաստորեն, այս կախարդված շրջանակից դուրս գալու միայն մի մանապարհ կա Ռուսաստանի համար. օգտագործել որևէ մզնաժամային պահ երկրի սոցիալ-քաղաքական կյանքում և ներքևից վերև ուղղված հարվածով անել հեղափոխութիւն, ինչպես արդեն մի անգամ արվել է: Հաշվի առնելով բուն Ռուսաստանի բնակչութեան ինքնագիտակցութեան բավական ցածր մակարդակը, համեմատած երկրի ծայրամասերի հետ, պետք է եզրակացնել, որ Ռուսական Նոր Հեղափոխութիւնը պետք է սկսվի ծայրամասերից՝ ազգային ազատագրական պայքարի ձևով: Համենայն դեպս, Հայ ազգը իրավունք չունի սպասելու մինչև հեղափոխական շարժումը հասունանա բուն Ռուսաստանում, որովհետև համամիութենական, հեղափոխական թոհուրթոհի ժամանակ տեղի կունենա ու-

ժերի լուրջ վերաբաշխում համաշխարհային մասշտաբներով, և ի նկատի ունենալով այդ հեղափոխական գործընթացում անխուսափելի զինված ընդհարումները, կարելի է եզրակացնել, որ Հայ ազգի գոյությունը կղերմվի ծայրահեղ լուրջ վտանգի տակ: Պատմական փորձը հուշում է, որ նման թոհուրոհի ժամանակ միջազգային կարծիքն ու հումանիզմի գաղափարը մի կողմ են նետվում, և ամեն ազգ աշխատում է հարևանի հաշվի լուծել իր խնդիրները: Աշխարհը այնքան զրադված կլինի մեծ իրադարձություններով, որ փոքրիկ Հայաստանի ոտնատակ լինելը ոչ ոք չի նկատի: Այլ ելք չկա Հայ ազգի համար, քան Հայաստանը առաջինը դուրս բերել ԽՍՀՄ-ի կազմից:

Հաշվի առնելով ժողովրդավարական աշխարհի տնտեսական աննախադեպ ամբողջութաթիրությունից հրաժարվելուց և ազատ տնտեսական շուկա ստեղծելուց հետո, պետք է եզրակացնել, որ ԽՍՀՄ-ի ազգային սոցիալ-կուլտուրական և քաղաքական վերածնունդը կարելի է երաշխավորել միայն ԽՍՀՄ-ի կախությունից փլուզման ու ԽՍՀՄ-ի կողմից իր գաղութներից հրաժարվելու դեպքում:

Գաղութները ոչ միայն չեն փրկում Խորհրդային Միության տնտեսությունը, այլև կատարում են բալաստի դեր: Ավելին, տեղի է ունենում դրամի հոսք դեպի ծայրամասերը և բուն ԽՍՀՄ-ի բնակչության կենսամակարդակը, այդ իսկ պատճառով, ավելի ցածր է, քան կախությունից ծայրամասերի բնակչության կենսամակարդակը: Մյուս կողմից, հակասությունը սրվում է ԽՍՀՄ ժողովուրդների նկատմամբ վարվող բռնաժողովման քաղաքականությունից, հանրապետությունների բնական ուսուցանանքի անխնա կողոպուտով և ազգերի ազգային, սոցիալ-կուլտուրական, քաղաքական շահերի կոպիտ ոտնահարումներով:

Գաղութատիրական համակարգը ԽՍՀՄ-ում նույնպես իրեն սպառնում է տնտեսապես, և քաղաքականապես:

Հիմա, առավել ևս քան երբևիցե, Հայ ազգը պետք է հստակորեն հասկանա իր անելիքը: Հայ ազգը գոյատևման և քարգավաճման այլ ճանապարհ չունի, քան Հայաստանը դարձնել անկախ, ուժեղ ու քարգավաճող պետություն:

Ի՞նչ անել այդ նպատակին հասնելու համար: Հայաստանը պետք է դուրս գա ԽՍՀՄ-ի կազմից և վերականգնի իր պետականությունը:

Հայ ազգը այսօր ունի մի շարք խնդիրներ /ԽՍՀՄ-ի տարածքում իր տարածքային ամբողջության վերականգնելը, կենսոլորտի աղտոտման հայոց լեզվի դիրքերի վերականգնումը և այլն/, որոնք ոչ մի դեպքում

քում պետք չի հետաձգել վաղվան, այսինքն՝ պետությունը վերականգնելուց հետո լուծելու, այլ պետք է այդ խնդիրները լուծելու համար գուզահեռ պայքար մղել հիմա, որովհետև անկախացման ընթացքը կարող է տևել տարիներ, իսկ վերահիշյալ խնդիրները հրատապ են և օր-օրի ավելի անտանելի չափեր են ընդունում:

Հայ ազգը առաջին հերթին պետք է զլտակցի, որ ապրել ու բարգավաճել կարող է միայն անկախությունը վերականգնելուց հետո: Յոթանասուն տարվա փորձը ցույց տվեց, թե որքան թանկ է նստում մեզ վրա օտարի կրունկի տակ ապրելը: ԽՍՀՄ-ի, հովանու, տակ Հայաստանը կրեց տարածքային կորուստներ, ազգաբնակչության մի մասը ցրվեց Խորհրդային Միությունում մեկ ու չունենալով ազգային կրթությունը՝ ապագայից, Հայաստանի կենսոլորտի աղտոտվածությունը հասավ ծայրահեղ աստիճանի, սկսվեց հայերի աննախադեպ արտագաղթը ԽՍՀՄ-ից, Հայաստանում վերացվեցին իսկական ազգային դպրոցները, հայոց լեզուն Հայաստանում սկսել է հոգևոր ապրել, Հայկական եկեղեցին անջատվել է իր հոտից՝ նրան մատնելով անհաստատության, վերածվել է պետական հիմնարկի: Հայերից խլվեց զորք ունենալու ու զենք կրելու իրավունքը, և հիմա Հայ ազգը լրիվ անպաշտպան է ԽՍՀՄ-ի գնդեր կրելու իրավունքը, և հիմա Հայ ազգը լրիվ անպաշտպան է ԽՍՀՄ-ի տարածքում իր հանդեպ ոտնձգություն անողների դիմաց: Մահմեդական քրդերը, ազրերը, պարսիկները, թուրքերը, արաբները, հենց բուն իրանում իրար հանդեպ վարում են ազգային անհանդուրժականության քաղաքականություն, չնայած դավանում են միևնույն կրոնը: Երևի չարժե էլ նշել այն անհանդուրժողականության ու երբեմն էլ թշնամության փաստերը, որ իրար հանդեպ տածում են իսլամ դավանող պետությունների մեծ մասը:

Իսլամ դավանող երկրներում, կրոնը այսօր օգտագործվում է որպես միջոց, անջրպետվելու համար արտաքին աշխարհից ու զոհն այդպես պաշտպանվելով օտար, ավելի ուժեղ և զարգացած մշակութային ու տնտեսական ազդեցություններից՝ պահպանելու ազգային ինքնատիպությունը ու տնտեսական անկախությունը:

Թուրքալեզու մի շարք ժողովուրդներ ու ազգեր գոյություն ունեն այսօր ԽՍՀՄ-ի տարածքում: Եթե դարասկզբին,,պանթուրքիզմը,, իրոք նշանակալից ուժ էր և կարող էր առաջ բաշել թուրքալեզու ցեղերին և ժողովուրդներին միավորելու գաղափարը, ապա հիմա դա լրիվ ուտոպիա է: Դարասկզբին թուրքալեզու ցեղերի մշտնջող մեծամասնությունը նոր էին սկսում կազմավորվել որպես ժողովուրդներ և նրանց համեմատ քիչ թե շատ զարգացած թուրքիան կարող էր,,պանթուրքիզմը

մի,, դրոշմ պարգև թուրքալեզու ժողովուրդներին միավորելու իր հովանու տակ: Բայց նույնիսկ դարասկզբին, երբ հանգամանքները համեմատաբար բարենպաստ էին, ,,պանթուրքիզմի,, ծրագրերը մատնվեցին անհաջողության:

Թուսաստանի խորհրդայնացումից հետո կազմավորվեցին միջինասիական և անդրկովկասյան թուրքալեզու հանրապետությունները ու ժողովուրդները: Այդ ժողովուրդները այսօր սկսում են կազմավորվել որպես ազգեր՝ ունենալով ընդերքի բավական պաշարներ ինքնուրույն ապրելու համար և հիմա, առավել ևս քան երբևիցե, նրանց համար անընդունելի է միանալով մի ազգ, մի պետություն դառնալու գաղափարը, այն էլ յոթ սարից, յոթ ծովից անդին գտնվող, ինչ-որ թուրքիայի հովանու տակ: Նույն միջինասիական հանրապետությունները, չնայած ժողովուրդների բարեկամության մասին գոռացվող կարգախոսներին, միմյանց հանդեպ ցուցաբերում են ազգային անհանդուրժողականություն:

Կարելի է միայն զարմանալ, թե ինչպես են նրանք համախմբվելու օսմանյան կիսալուսնի տակ և ինչպես են հանդուրժելու օսմանցիների իրենց զլխավերևում, երբ ուզեցին, տաջիկների, դազախների, կիրգիզների, թուրքմենների մոտ լիովին հասունացած է ազգային ինքնագիտակցությունը, երբ նրանք գիտակցում են իրենց ազգային տարբերությունները և ունեն բազմաթիվ տարածքային խնդիրներ, որոնք նրանց հրահրում են միմյանց դեմ:

Ի դեպ, նույնակրոն ու նույնացեղ արաբական երկրներն էլ, առայժմ, ոչ մի ցանկություն չեն դրսևորում միավորվելու մեկ մեծ լուսիֆաթի մեջ և նույնիսկ, երբ հարցը հասնում է առաջնությանը, կամ մի թիզ հողին, նրանք զնում են միմյանց միջև փոխհարաբերությունների այնպիսի ծայրահեղ սրման, ինչպես այսօր Իրաքի և Սիրիայի փոխհարաբերություններն են:

Մի խոսքով, կարելի է չկասկածել, թե ինչպես ,,պանթուրքիստների,, միավորման մարմանը կդիմավորեն թուրքալեզու ժողովուրդներն ու ազգերը:

Այն կարծիքը, թե հայերն են, որ փակում են թուրքերի ծանապարհը դեպի Միջին Ասիա և Սիրիա, սկզբունքայնորեն սխալ է, որովհետև հայերը երբեք հակաթուրքական վահանի դեր չեն կատարել: Թուրքների ծանապարհը դեպի արևմուտք, մինչև արաբական արշավանքները, փակում էր Պարսկաստանը և հիմա էլ ,,պանթուրքիստների,, ծանապարհը դեպի արևելք փակողը դարձյալ Իրանն է: Հայաստանը գտնվում է հյու-

սիսում և այս հարցում ոչ մի էական դեր չի կատարում: Թուրքերի ծանապարհը փակող վահանը եղել է ու հիմա էլ շարունակում է լինել Իրանը, եթե իրոք ,,պանթուրքիզմը,, որպես իրական ուժ և գաղափար ընդունենք: Բնական է, որ սելջուկները Ալթայից և Միջին Ասիայից Փոքր Ասիա և Մերձավոր Արևելք թափանցեցին միայն արաբների կողմից Պարսկաստանը նվաճելուց հետո: Բուլղոսի անտեղի սնափառություն և անմտություն է, մեզ վրա վերցնելը մի դեր, որը ոչ կատարել ենք, ոչ կարող ենք կատարել և ոչ էլ արժե, որ կատարենք:

Ժամանակակից Ադրբեջանի տարածքում ապրող բնակչությանը հայերը մինչև խորհրդայնացումը, անվանում էին թաթեր ու ազրեր, ի նկատի ունենալով այդ տարածքում ապրող այդ երկու թուրքալեզու ցեղերին: Մեծ եղեռնից հետո, արևմտահայությունը գաղթելով Արևելյան Հայաստան, իր հետ բերեց նաև թուրք անվանումը Ադրբեջանի բնակիչների համար, քանի որ նրանք իրենց լեզվով, վարք ու բարքով նման էին Արևմտյան Հայաստանում ապրող թուրքերին:

Ադրբեջանցիներին թուրք անվանելը սխալ է, որովհետև, եթե օսմանյան թուրքերը կազմավորվեցին հիմնականում սելջուկ ցեղերից, ապա ադրբեջանցիները կամ ազրերը հիմնականում կազմավորվեցին թուրքմենական ցեղերից: Ի վերջո իր ով լինելը որոշողը ժողովուրդն է, իսկ ազրերը 1918 թվականին ստեղծելով անկախ հանրապետություն, այն չանվանեցին Թուրքիա, կամ Արևելյան Թուրքիա, այլ այն անվանեցին Ադրբեջան կամ Ազրբեջան, ի նկատի ունենալով իրենց ցեղի ու այդ տարածքի մի մասի անունը: Առաջին համաշխարհային պատերազմից հետո նրանք միանալու իրական հնարավորություն ունեին, բայց չմիացան, երևի անհնար գտնելով այդ երկու ցեղերի միացումը մի ժողովրդի մեջ:

Հայերի կողմից ադրբեջանցիներին թուրք անվանելը մինչև այսօր էլ հաջողությամբ օգտագործում են Մոսկվան և հայ կոմունիստները:

Ի՞նչ է մեզ տալիս թուրքերին և ադրբեջանցիներին ,,միացնելը,,: Թե թուրքերին, Մոսկվային կամ ադրբեջանցիներին որքան է դա օգտակար, կարելի է եզրակացնել, բայց հաստատ կարելի է ասել, որ մեզ համար շատ վնասակար է թուրքերին և ադրբեջանցիներին նույնացնելը: Այն ,,հեռառես դիվանագետները,, որոնք այդ երկու ժողովուրդներին միացնելը համարում են միջոց, որով փորձում են նույնացնել ոչ միայն ժողովուրդներին, այլև նրանց հայերի հանդեպ գործած ցեղասպանության դեպքերը, պետք է հասկանան, որ ադրբեջանցիները թուրքական ,,ավելցուկի,, կարիքը չեն զգում և իրենք էլ այն-

քան ոտնձգութիւններ են կատարել հայ ազգի նկատմամբ ցեղասպանութեան ոգով /Բաքու, Շուշի, Սուֆաքիթ, Նախիջևան, Մասիս, Խոջալու և այլն/, որ լիովին բավական է ամբողջ աշխարհի առաջ, նրանց անարգանքի սյուսնին գամելու համար: Ի վերջո աղրբեջանցիները, ի տարբերութիւն սուսնի թուրքերին, դավանում են իսլամի Շիա ուղղութիւնը, իսկ այդ երկու աղանդները իսլամի պատմութեան ողջ ընթացքում, դեռևս ոչ մի անգամ չի հաջողվել միաձուլել:

Այսպիսով, ինչպես 1918 թվականին, այնպես էլ հիմա, աղրբեջանցիների և թուրքերի միաձուլումը մի ազգի և մի հայրենիքի մեջ լիովին անհավանական է, ,պանթուրքիզմը,, աղրբեջանցիների հարցում լուրջ խոչընդոտների առաջ է կանգնել և դարձյալ կկանգնի, եթե այն երբևիցե նորից գլուխ բարձրացնի:

Ինչ վերաբերվում է թուրքական կառավարութեանը, ապա այն վաղուց հուշները կտրել է արևելքից և իր ապագան տեսնում է միայն արևմուտքում, եվրոպական երկրների հետ խաղաղ գոյակցութեամբ, միևնույն եվրոպական տնտեսական շուկայում: Այդ իսկ պատճառով, Հայաստանի անկախացման գործում թուրքիան խանգարող հանգամանք և հայերի համար վտանգավոր ուժ լինել չի կարող: Հայաստանի անկախացումը կարող է հանգեցնել Հայաստանի սոցիալիստական համակարգին միանալուն, իսկ թուրքիան այսօր դեմոկրատական համակարգի ամենահուսալի բացառիկներից մեկն է:

Ժամանակն է, որ բոլոր ,դիվանագետ,, հայերը հասկանան, որ քաղաքականութեան մեջ չկան հավերժ թշնամիներ ու հավերժ բարեկամներ, այլ կան միայն քաղաքական և ազգային շահեր: Հանուն այդ ազգային շահերի էլ տվյալ պետութիւնը վարում է այս կամ այն քաղաքականութիւնը: Քաղաքականութեան մեջ զգացմունքների համար տեղ չկա:

Արցախը ոչ թե Աղրբեջանն է խլել Հայաստանից, այլ Մոսկվան է նվիրել այն նրան և այդ իսկ պատճառով Արցախը պետք է պահանջել ոչ թե Աղրբեջանից, այլ Մոսկվայից և մեր պայքարում ոչ թե պետք է պայքարենք ընդդէմ Աղրբեջանի, որը ուզենք թե չուզենք, պետք է շարունակի ապրել մեր հարևանութեամբ, այլ Մոսկվայի, որը և հեղինակն է այս ազգամիջյան ընդհարումների ու թշնամութեան, և միակ օգուտ ստացողը:

Հայաստանին անհրաժեշտ է անկախութիւն և նա պետք է անկախանա ամեն կերպ խուսափելով բոլոր տեսակի ազգամիջյան պատերազմներից,

քանզի հարյուր տարվա հաղթական պատերազմները այնքան օգուտ չեն կարող տալ ազգին, որքան հարյուր տարվա խաղաղութիւնը:

Յոթնասուն տարի ,ազգային,, կռիվող հայ կոմունիստները, հետ են պահում հայութեանը, իր անկախութիւնը վերականգնելու համար որևէ քան ծեղնարկելու մտքից: Նրանք համակերպվեցին անգամ ստալինյան հայկական ցեղասպանութեան հետ և արդարանում էին, տսելով, որ Խորհրդային Ռուսաստանի հովանու տակ հայ ազգը հնարավորութիւն է ստացել ,գոյատևելու,,: Գոյատևման տարօրինակ ձև է, երբ հարյուր հազարներով զնդակահարվում ես, Կերչում համարյա անգն նետվում գերմանական հրասայլակների անլաթթուրների տակ, արտորվում, ոռոսացվում, ապազգայնացվում, բաժան-բաժան արվում, խեղդվում քիմ-զործարանների զազերով ու դեռ մի առումակայան էլ սրտիդ վրա կրելով սարսափահար սպասում ես, թե երբ է պայթելու և ջնջելու վերջին փշուր Հայաստանը, վերջին փշուր հայութեան հետ:

Հայ ոռոսամուկները կամ ստրկամիտները իրենց ամենածանրակշիռ փաստարկը համարում են Հայաստանի աշխարհագրական դիրքը՝ տսելով, որ անջատվելով Ռուսաստանից, Հայաստանը չի կարող ,գոյատևել,, որովհետև շրջապատված է ,մահմեդական,, ժողովուրդներով: Իրենց փաստարկները ավելի ծանրակշիռ դարձնելու համար, նրանք զիտական հիմնավորում են տալիս և ,պանիսլամիզմի,, ու ,պանթուրքիզմի,, ուրվականներով են վախեցնում հայութեանը:

Այս գաղափարախոսութիւնները իսկապես եղել են և այսօր էլ գոյութիւն ունեն, բայց այսօր դրանք չափազանց հեռու են իրենց հետևից մասսաներին տանել կարողանալու ուժն ունենալուց: Նրանք այսօր թուրքիայում գոյութիւն ունեն որպես փոքր խմբավորումներ, բայց դրանք այսօր պարտված գաղափար կրող խմբավորումներ են, և բընական է, որ ոչ մի հեղինակութիւն էլ չեն վայելում ժողովրդի մոտ:

Նախ խոսենք ,պանիսլամիզմի,, մասին: Իրո՞ք հայերը ամբողջ ,իսլամական,, աշխարհի ամենաերզվյալ թշնամիներն են և իրո՞ք ողջ ,իսլամական,, աշխարհը պատրաստ է կուլ տալ ,քրիստոնեական,, աշխարհին և առաջին հերթին հայութեանը:

Կրօնը, ցավոք, քսաներորդ դարի վերջում բավական զիջել է իր դերը և իսլամ դավանող երկրներում պետականորեն կրօնական մոլեռանդութիւն հրահրելը, ավելի շուտ, ոչ թե հարձակողական, այլ ինքնապահպանման նպատակներ ունի: Եթե, նույնիսկ իսլամի գաղափարախոսների մոտ լինի էլ մեծ իսլամական տերութիւն կամ խալիֆաթ ըս-

տեղծելու գաղափար, գործնականում այդ անհնար է, որովհետև կրոնը
չէ որ միավորում է մարդկանց, ցեղերին, այլ՝ էթնիկական տիպի
նույնութունը, միևնույն հայրենիքը, լեզուն: Կրոնը միայն օժան-
դակել կարող է այդ միավորմանը, բայց ոչ անմիջականորեն իր վրա
վերցնել միավորման խնդիրները: Դրա լավագույն օրինակը այժմյան
իրանն է: Իրանն այսօր իսլամի ամենաուժեղ քաստիոնն է, և միաժա-
մանակ, իսլամը լրիվ անկարող է որևէ քան անել Իրանի ներքին, ազ-
գային հակասութիւնները լուծելու խնդրում:

Պետք է հիշել, որ մենք պատասխանատու ենք մեր սերունդների
առաջ: Նրանք պետք է ապրեն և ապրեն ազատ ու անկախ...

Դ Ր Ո Շ Ա Կ Ա Կ Ի Ր